ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Թաիլանդի Թագավորություն գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Անի Աղաբաբյան - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ժողովրդագրության և ընտանիքի սոցիալական երաշխիքների վարչության ինտեգրված սոցիալական ծառայությունների բաժնի մասնագետ ժ/պ

2. Գործուղման վայրը և ժամկետները.

2026թ. ապրիլի 28-ից մայիսի 15-ը, Թաիլանդի Թագավորություն:

3. Հրավիրող կողմը.

Թաիլանդի միջազգային համագործակցության գործակալություն (Thailand International Cooperation Agency՝ TICA):

4. Գործուղման նպատակը.

«Համայնքների հզորացում ներառական զարգացման համար՝ ԲՏՓ-ի կիրառմամբ Կայուն զարգացման նպատակների համատեքստում. դասեր համայնքահեն մասնակցային հետազոտությունից և համայնքի կողմից առաջնորդվող զարգացումից Թաիլանդի Իսան տարածաշրջանի գյուղերում» խորագրով դասընթացին մասնակցելու նպատակով:

5. Քննարկված թեմաները.

- ✓ Կայուն զարգացման նպատակների (SDGs) և «Բավարար տնտեսության փիլիսոփայություն» (SEP) հայեցակարգի քննարկում:
- ✓ Համայնքային մասնակցային հետազոտության (Community-Based Participatory Research – CBPR) մեթոդաբանության ներկայացում:
- ✓ Համայնքահեն զարգացման (Community-Driven Development – CDD) մոտեցումների ուսումնասիրություն:
- ✓ Տեղական ինքնակառավարման մարմինների դերի և համայնքային մասնակցության մեխանիզմների քննարկում:
- ✓ Համայնքային համատեքստի ուսումնասիրման և դաշտային աշխատանքի կազմակերպման հարցեր:
- ✓ Սահմանամերձ և միջսահմանային կառավարման առանձնահատկությունների քննարկում:

- ✓ Թաիլանդի թագավորական զարգացման կենտրոնների գործունեության փորձի ներկայացում:
- ✓ Կանանց զարգացմանն ու տնտեսական հզորացմանն ուղղված համայնքային նախաձեռնությունների ներկայացում:
- ✓ Տեղական մշակույթի և ավանդական գիտելիքի կիրառումը տեղական տնտեսության զարգացման գործընթացներում:
- ✓ Հանրային քաղաքականությունների արտացոլման (policy reflection) և վերլուծության գործիքների ներկայացում:
- ✓ Ծրագրային նախագծման և նախագծերի ներկայացման հմտությունների զարգացում:
- ✓ Միջազգային փորձի և լավագույն պրակտիկաների փոխանակում համայնքային զարգացման ոլորտում:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

1) Դասընթացին մասնակցել են 17 երկրների ներկայացուցիչներ՝ Հայաստան, Ադրբեջան, Ինդոնեզիա, Լաոսի Ժողովրդադեմոկրատական Հանրապետություն, Մալայզիա, Մյանմա, Պակիստան, Շրի Լանկա, Ուզբեկստան, Սամոա, Մադագասկար, Մոզամբիկ, Նիգերիա, Ուգանդա, Էլ Սալվադոր և Դոմինիկյան Հանրապետություն:

2) Առաջին դասախոսության ժամանակ բանախոս Տիտիպոլ Փակդիվանիչը ներկայացրեց «Բավարար տնտեսության փիլիսոփայություն» հայեցակարգի ձևավորման, զարգացման և կիրառական նշանակության վերաբերյալ թեման:

3) Երկրորդ դասախոսության ժամանակ բանախոսներ Քինգկարն Սումնուանյենը և դոկտոր Պիսամայ Սրինատեն ներկայացրին համայնքային մասնակցային հետազոտության (CBPR) մոտեցման կիրառելիության և իրականացման մարտահրավերները՝ Իսանի փորձի օրինակով:

4) Երրորդ դասախոսության ժամանակ բանախոս դոկտոր Սիրիպորն Ջանտանասակուլվոնգը ներկայացրեց համայնքահեն զարգացման (CDD) մոտեցման շրջանակներում տեղական ինքնակառավարման մարմինների դերի, ինչպես նաև համայնքահեն զարգացման քաղաքականությունների առաջմղման մեխանիզմների վերաբերյալ թեմաներ:

5) Չորրորդ դասախոսության ժամանակ բանախոսներ դոկտոր Տիտիպոլ Փակդիվանիչը և դոկտոր Թանաչետ Վիսայջորնը ներկայացրին համայնքային համատեքստի ուսումնասիրման, դաշտային աշխատանքի նախապատրաստման, ինչպես նաև Թաիլանդ–Լաոս սահմանամերձ տարածքներում միջհամայնքային համագործակցության վերաբերյալ թեմաներ:

6) Դասընթացի հինգերորդ օրվանից մասնակցել եմ դաշտային այցելությունների և ուսումնաճանաչողական հանդիպումների:

7) Սակոն Նախոն նահանգում այցելել եմ «Պուպարն թագավորական զարգացման ուսումնահետազոտական կենտրոն», «Փաննանիկոմ» ենթաշրջանի համայնքապետարան և «Բան Դոնկոյ» համայնք, որոնց ընթացքում Տիտիպոլ Փակդիվանիչը ներկայացրեց թագավորական զարգացման ծրագրերը, տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքների համագործակցության մեխանիզմները, «Բավորն» (տուն–տաճար–դպրոց) մոդելի կիրառման փորձը, ինչպես նաև ավանդական թայլանդական գործվածքների արտադրության, տեղական մշակույթի և ավանդական գիտելիքի կիրառման փորձը՝ համայնքային ինքնաբավության և սոցիալ-տնտեսական զարգացման համատեքստում:

8) Նախոն Փանոմ նահանգում այցելել եմ «Լաո-Ու» համայնքային ձեռնարկություն, «Ռենու Նախոն Վիտտայանուկուլ» դպրոց և «Բան Խոկ Սավանգ Փաթհանա» ուսումնական կենտրոն, որոնց ընթացքում Տիտիպոլ Փակդիվանիչը ներկայացրեց տեղական արտադրության, համայնքային համագործակցության և մշակութային ժառանգության պահպանման ուղղությամբ իրականացվող նախաձեռնությունները, «Փու Թայ» էթնիկ խմբի մշակութային ավանդույթներն ու համայնքային մշակութային նախաձեռնությունները, ինչպես նաև տեղական ռեսուրսների հիման վրա հավելյալ արժեք ստեղծելու և համայնքային ձեռնարկատիրության զարգացման մեխանիզմները:

9) Խեմմարատ համայնքում այցելել եմ կանանց զարգացման համայնքային ձեռնարկություններ և օրգանական բրնձի արտադրությամբ զբաղվող համայնքային խմբեր, որոնց ընթացքում Սիրիպորն Ջանտանասակուլվոնգը ներկայացրեց կանանց տնտեսական հզորացման, օրգանական գյուղատնտեսության և կայուն համայնքային զարգացման փորձառությունները: Այցելել եմ նաև «Բան Դաենգ» համայնքի եղեգնյա գորգագործությամբ զբաղվող կանանց համայնքային ձեռնարկություն և գյուղական տուրիզմի ու համայնքային հյուրընկալության նախաձեռնություններ:

10) Դաշտային այցելություններից հետո՝ հինգերորդ դասախոսության ժամանակ, բանախոս դոկտոր Տիտիպոլ Փաքդիվանիչը ներկայացրեց «Բավորն» մոդելի սոցիալ-տնտեսական զարգացման մեջ կիրառելիությունը համայնքային մասնակցային հետազոտության (CBPR) և համայնքահեն զարգացման (CDD) մոտեցումների համատեքստում (Սակոն Նախոն և Նախոն Փանոմ օրինակներով)» թեման:

11)Վեցերորդ դասախոսության ժամանակ բանախոս դոկտոր Քինգկարն Սումնուանյենը ներկայացրեց «Համայնքային մասնակցային հետազոտության (CBPR) և համայնքահեն զարգացման (CDD) փորձի սինթեզ և արտացոլում. Իսանի փորձից գլոբալ կիրառելի դասեր» թեման:

12) Դասընթացի նախավերջին օրը մասնակցել եմ խմբային աշխատանքի:

13) Դասընթացի վերջին օրը մասնակցել եմ մշակութային այցերի՝ Բան Պա-Աո համայնք, Բան Յանգ Նոյ արվեստի և արհեստների կենտրոն, Վատ Սի Նուան Սաենգ Սավանգ Արոմ տաճար, Փա Տաեմ ազգային պարկ, Խոնգ Չիամ և Վատ Սիրինդիորն Վարարամ Փու Պրաո տաճար:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպման ընթացքում փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկություններ չկան:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

Անի Աղաբաբյան 20.05.2026թ.